ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Նարեկ Գրիգորյանի և Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման ղեկավար Կարեն Գրիգորյանի Ուզբեկստանի Հանրապետության Տաշքենդ քաղաք գործուղման արդյունքների մասին

2018 թվականի օգոստոսի 14-16-ը Ուզբեկստանի Հանրապետության Տաշքենդ քաղաքում կայացել է ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XL նստաշրջանը, որին՝ օգոստոսի 13-ին, նախորդել էին Միջպետական խորհրդի, տարածական տվյալների ենթակառուցվածքի գծով, միասնական կոորդինատային և բարձունքային համակարգերի գծով, աշխարհագրական անվանումների գծով աշխատանքային խմբերի հանդիպումները: Խորհրդի Տարածական տվյալների ենթակառուցվածքների գծով աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ ներկայացրվել է Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման համար կատարվող աշխատանքները և տարբեր ձևաչափերով վարվող քարտեզագրական նյութերի հավաքագրման և ստուգման համար մշակված և ներդրված համակարգչային ծրագրերը, իսկ աշխարհագրական անվանումների գծով աշխատանքային խմբի հանդիպմանը ներկայացվել է ՀՀ աշխարհագրական օբյեկտների քարտադարանի վարման հետ կապված հարցերը:

Նստաշրջանին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության,

Տաջիկստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության և որպես դիտորդներ Ադրբեջանի Հանրապետության և Թուրքմենստանի պատվիրակությունները:

Նստաշրջանի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Ագըբայ Սմագուլովը և Ուզբեկստանի Հանրապետության Օլիյ Մեջլիսի Սենատի գյուղատնտեսության և ջրային տնտեսության հարցերով կոմիտեի նախագահի տեղակալ Տաժիև Բախադիր Սադուլաևիչը:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել է ԱՊՀ-ում միասնական կոորդինատային և բարձունքային համակարգի ներդրման, Տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին նախագծային օրենքի մշակման, գեոդեզիայի, քարտեզագրության, երկրատեղեկատվական համակարգերի, կադաստրի և հեռահար զոնդավորման բնագավառներում կիրառվող ժամանակակից տերմինների բառարանի մշակման և արդիականացման, աշխարհագրական անվանումների էլեկտրոնային մատյանի վարման վերաբերյալ, գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման բնագավառում լավագույն նորարարություններին վերաբերող, Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության ինստիտուտում մասնագետների որակավորման բարձրացման, ԱՊՀ մասնակից երկրների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, Երկրի հեռահար զոնդավորման բնագավառի մասնագիտական աշխատաշուկայի սերտիֆիկացման և օրինականացման վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքային խմբի ստեղծման, երկրատարածական տեղեկությունների կառավարման հարցերը և այլն:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Նարեկ Գրիգորյանը ներկայացրեց ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XXXIX նստաշրջանի որոշումների կատարողականը և միջնստաշրջանային ժամանակահատվածում ունեցած ձեռքբերումները:

Նստաշրջանի ավարտին ամփոփվել է կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XL նստաշրջանի մասնակից երկրների պատվիրակությունների ղեկավարների կողմից քննարկվել և ստորագրվել է նստաշրջանի ամփոփիչ փաստաթուղթը՝ արձանագրությունը (կցվում է): Քվերակության արդյունքում հաջորդ XLI նստաշրջանի նախագահող երկիր է ընտրվել Տաջիկստանի Հանրապետությունը, իսկ համանախագահողները Ուզբեկստանի Հանրապետությունը և Ղրղզստանի Հանրապետությունը: Ղրղզստանի Հանրապետությունը առաջարկեց 2020 թվականի նստաշրջանը հրավիրել իրենց Հանրապետությունում:

Կոմիտեի ղեկավարի տեղակալ
Նարեկ Գրիգորյան

«Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն»
ստորաբաժանման ղեկավար
Կարեն Գրիգորյան